ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ
✆374 10 553310/116 +37493464789 gagik.ktryan@sportedu.am www.sportedu.am Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0070, Ա. Մանուկյան 11

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ

(2023, 2024թթ.)

1. Մշտադիտարկման գործընթացի ընդհանուր նկարագիրը

ՀՖԿՍՊԻ հիմնադրամի (այսուհետև՝ Ինստիտուտ) 2022-2026թթ Ռազմավարական ծրագրի պլան–ժամանակացույցի (այսուհետև՝ ՌԾ) «3.1.5. 2022-2026թթ. Ռազմավարական ծրագրի և գործողությունների պլան–ժամանակացույցի արդյունքների պարբերական գնահատում, մշտադիտարկման հանձնախմբի ստեղծում» կետի համաձայն՝ ռեկտորի 2024թ. մայիսի 23–ի N 176-Լ հրամանով ստեղծվել է մշտադիտարկման խումբ (տես՝

Հավելված 1) և ռեկտորի 2025թ. մարտի 25–ին N 62-Լ հրամանով կատարվել է փոփոխություն և լրացում նախորդ հրամանում՝ սահմանելով աշխատանքների ամփոփման վերջնաժամկետ 2025թ. մայիսի 19–ը (տես՝ Հավելված 2):

Մշտադիտարկման խումբը նշված ժամանակահատվածում թվով 3 հանդիպում և քննարկումներ է անցկացրել (տես՝ Հավելված 3), ինչպես նաև ընթացիկ ռեժիմով բազում հանդիպումներ և քննարկումներ են անցկացվել խմբի առանձին անդամների հետ, այդ թվում նաև՝ պաշտոնական էլ. հասցեներին ուղարկված նամակագրության միջոցով: Մշտադիտարկման գործընթացի իրականացման քայլերը մանրամասն ներկայված են Հավելված 3–ում առկա արձանագրություններում:

Իրականացված կամ իրականացման ընթացքում գտնվող գործողությունները գնահատվել են՝ հիմք ընդունելով ՌԾ–ով սահմանված ակնկալվող արդյունքները, արդյունքային ցուցիչները և չափման միավորը: Տեղեկատվության հավաքագրման նպատակով յուրաքանչյուր ռազմավարական նպատակի համար նշանակվել է աշխատանքային խմբից պատասխանատու: Պատասխանատուները ձևաչափին համապատասխան ներկայացրել են տվյալ նպատակի համար նախատեսված կատարողականի աղյուսակում գործողությունների իրականացման վերաբերյալ առկա տեղեկատվության և պլանավորվածի հետ համեմատության հաշվետվությունը (տես՝ Հավելված 4. ՌԾ–ից բխող գործողությունների ծրագրի պլան–ժամանակացույցի կատարողականի աղյուսակ): Տեղեկատվության հավաքագրման համար առանցքային հիմք են հանդիսացել ռեկտորի 2023թ. և 2024թ. հաստատված տարեկան հաշվետվությունները և կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված

հաշվետվություններն ըստ ՌԾ ձևաչափի: Լրացված աղյուսակն ուղարկվել է աշխատանքային խմբի անդամներին, որոնք նաև դիտարկումներ և հստակեցումներ են ներկայացրել որոշ կետերի վերաբերյալ (տես՝ էլեկտրոնային նամակագրությունը): Վերջիններս քննարկման արդյունքում ներառվել են փաստաթղթում:

Կատարողականի աղյուսակի հիման վրա իրականացվել է ՌԾ պլան–ժամանակացույցի միջնաժամկետ (2023, 2024թթ.) կատարողականի արդյունքների ամփոփիչ վերլուծություն՝ արհեստական բանականության կիրառմամբ (տես՝ Հավելված 5): Վերը նշված հավելվածների հիման վրա կազմվել է սույն զեկույցը:

2. Մշտադիտարկման նպատակը, դուրս բերված խնդիրները և եզրակացությունը

Համաձայն ««Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ռազմավարական ծրագրի մշակման, մշտադիտարկման, գնահատման և վերանայման քաղաքականության և ընթացակարգ»–ի (այսուհետև՝ Ընթացակարգ).

«Մշտադիտարկման նպատակն է՝ ստուգել ՌԾ–ի իրագործման առաջընթացը:

ՌԾ առաջընթացն ապահովելու և նպատակներին հասնելու համար Ինստիտուտը պետք է.

1. Ապահովի, որ ստորաբաժանումների և պատասխանատու անձանց գործողությունները լինեն ՌԾ տեսլականին, առաքելությանը, նպատակներին և ուղղություններին համահունչ,

2. Անհրաժեշտության դեպքում վերանայի գործող ՌԾ–ն ներքին և արտաքին էական փոփոխություններին համապատասխան»:

Ընթացակարգի համաձայն՝ ՌԾ հերթական մշտադիտարկումն անցկացվում է 2 տարին մեկ անգամ: Ըստ այդմ մշտադիտարկման ենթակա ժամանակահատվածն ընդգրկել է 2023 և 2024 թվականները:

Առկա իրավիճակն Ինստիտուտում ըստ ՌԾ նպատակների և խնդիրների նկարագրված է ՌԾ–ից բխող գործողությունների ծրագրի պլան–ժամանակացույցի կատարողականի աղյուսակում (Հավելված 4):

Հավելված 5–ում ՌԾ պլան–ժամանակացույցի միջնաժամկետ (2023, 2024թթ.) կատարողականի արդյունքների ամփոփիչ վերլուծության մեջ կատարված են դատողություններ (արձանագրումներ) յուրաքանչյուր ռազմավարական նպատակի համար, դուրս է բերված դրանց իրականացման տոկոսային ցուցանիշները և՛ ըստ առանձին նպատակների, և՛ ամբողջ ՌԾ–ի մասով, դուրս են բերված հիմնական խնդիրները և դրանց ուղղությամբ խորհրդատվություններ (առաջարկություններ) հետագա բարելավման համար: Առկա են նաև ամփոփիչ եզրահանգումներ և եզրակացություն:

ՌԾ իրականացման արդյունքների առկա վիճակը վերլուծելիս կարելի է հանգել այն եզրակացության, որ Ինստիտուտում դեռևս մեծամասամբ արդիական են ռազմավարական պլանի իրագործման շրջանակներում նախորդ 2022թ–ին իրականացված մշտադիտարկման արդյունքում թվարկված առաջարկությունները՝ միտված ՌԾ իրագործման արդյունավետության բարձրացմանը: Այդ թվում՝

1. Բուհի բոլոր ստորաբաժանումների համար կազմակերպել ՌԾ նպատակների և խնդիրների վերաբերյալ քննարկումների կազմակերպման անհրաժեշտությունը:
2. Բուհի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային պլաններում և հաշվետվություններում հղում կատարել ՌԾ ակնկալվող արդյունքներին և արդյունքային ցուցիչներին:
3. Ուժեղացնել համագործակցությունը տվյալ ՌԾ նպատակի իրագործման շրջանակներում բուհի տարբեր ստորաբաժանումների միջև:

Մշտադիտարկման խմբի ղեկավար՝ **Գ. ՔԹՐՅԱՆ**